

## ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

### ԳԵՐՄԱՆԻԱ.

Բողոքական ուսանողութիւնը գերմանական 17 համալսարաններում, որոնք աստուածաբանական ֆակուլտետներ ունեն, 1906 թուի ուսումնական տարուայ վեցամսեակին եղել են 2208 բողոքական աստուածաբանութեան ուսանողներ:

Նախորդ տարուայ ամառը 2329 հոգի, իսկ ձմեռը 2186. 1905 թուի ամառը 2286 հոգի, 1881 թուի ամառը 4799 հոգի: Եթէ, վիճակագրական տեղեկութիւնների համաձայն, հանելու լինենք օտարերկրացի ուսանողների թիւը՝ պետութեան հպատակ ուսանողները թուից, այս անցած կէս տարուայ համար կոտանանք 2023 հոգի. 1906 թուի ամառուայ համար 2123 հոգի նախանցեալ ձմեռուայ սեմեստրի համար 1996 հոգի, 1882 թուի ամառուայ համար 2605 հոգի. իսկ 1880 թ. վերջին սեմեստրի համար 4,400 հոգի:

Ըստ այսմ աւետարանական հոգևորականութիւնը չի աւելանում, այլ ընդհակառակն պակասում է: Իսկ ինչ վերաբերում է առանձին ֆակուլտետներին, որոնցից առաջին տեղը բռնում է Բերլինին՝ 1906 թուի ձմեռը ունեցել է 384 ուսանող, իսկ ամառը 286. ապա հետևում են՝ Լայպէ 334 (318), Լայպցիգ 323 (312), Տումբինգեն 230 (324), Էրլանգեն 130 (148), Մարբուրգ 109 (144), Գեոտինգեն 100 (115), Գրայֆսվալտ 82 (102), Քեոնիգսբերգ 76 (174). Շտրազբուրգ 71 (63), Գիսեն 66 (73), Բրեսլաու 63 (61), Բոնն 59 (83), Լայպելբերգ 53 (54), Ռոստոք 51 (60), Ենա 47 (57), Քիլ 30 (38):

### ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ \*

Գերմանիայի այսպէս կոչուած բողոքականների մեծ ընկերութիւնը Ապրիլի 12-ին Բերլինում բողոքի մի մեծ ժողով էր գումարել, ուր ուսուցչապետ իրաւաբ. դր. Գերֆկեն մի դասախօսութիւն կարդաց հռենոսովեստիպեան «աւետարանական ազատութեան բարեկամներին» շարժման մասին:

\* Այս ընկերութիւնը կազմուած է ղէպի ծախ հակուած ազատ բողոքականներից, որոնք աստուածաբանութեան միջ ըացիոնալիստականութեան աւելի նշանակութիւն են տալիս:

ժողովի վերջում հետևեալ որոշումները եղան:

Ա. Աւետարանական եկեղեցին որպէս հակադրութիւն կաթողիկոսութեան իւր էութեամբ պատմական՝ տուեալ է ուրեմն քրիստոնէական կրօնի անփոփոխ և յաւիտենական ըովանդակութեամբ հանգերձ՝ մի փոփոխական երևոյթ: Նորա հասկացողութիւնը այլ ևս չի համապատասխանում որպէս դաւանաբանական վարդապետութիւն նորագոյն ժամանակի բարեպաշտութեան: Իւր էութիւնն իսկ պահանջում է, որ նա փոխուի հետզհետէ և դառնայ մի զօրեղ, բարոյական կրօնական հասարակական միութիւն առանց որ և է դաւանաբանական և հաւատոյ պարտաւորութեան, մի իդէալ, որ հարիւր տարի սորանից առաջ բողոքական ամենամեծ առտուածաբաններից մէկը՝ Շլայերմախեր երազել էր: Այս փոփոխութիւնը պէտք է յառաջ բերել որքան կարելի է խաղաղ ճանապարհով, առանց եկեղեցական կեանքի խիստ ցնցումների, դժոյշ և բարեպաշտական ակնածութեամբ լի բարեփոխութիւններով:

Առ այժմ որպէս մերձաւոր ապագայի անհրաժեշտութիւն պէտք է 1) եկեղեցական օրէնսդրութեան փոփոխութիւն, որի նպատակն է ապահովել աւետարանական հաւատոյ այնպիսի ազատութիւնը, որ հնարաւորութիւն տայ աւետարանական դաւանութեան առողջ զարգացման:

2) Վերացնել Kollogium-ը (քննութիւնը) պրոուսական եկեղեցուց դուրս հոգևորականների ձեռքով, խուսափելու համար այն զեղծումներից, որ վերջին ժամանակներս այս հաստատութիւնն սկսել է դատեր և քննութիւններ բանալ որպէս թէ մոլորութեան և հերձուածների դէմ մաքառելու նպատակով:

3) Վարդապետական խնդիրների որոշումը յանձնել եկեղեցական իշխանութիւնից անկախ մի հաստատութեան՝ հոգևորականներն ու համայնքները ազատելու ներկայ իրաւական անապահովութիւնից:

4) Օրինական հաստատութեամբ բարձր եկեղեցական խորհուրդը պատասխանատու համարել նահանգական միջամտութեան դէմ՝ պառտորների և համայնքների հաւատոյ և խղճի ազատութեան վերաբերութեամբ:

Բ. Եկեղեցու մէջ օրթոդոքս (ուղղափառ, իմա պահպանողական) ուղղութեան դերի շխանութիւն հետևանքն է, որ օրինական հաստատութիւն է ստացած ժողովրդական դպրոցների դաւանական ընաւորութիւնը: Սորանով բռնութիւն է դործ դրուում ժողովրդական կրթութեան միւս ուղղութիւնների վերաբերութեամբ և կաթողիկոսական բողոքական հասարակութիւն-

ներքի մէջ եղած սառնութիւնը աւելի ևս մեծանում է ժողովրդական զպրօցներին դաւանական ընտարութեամբ: Եթէ անհնար է օրէնքը ոչնչացնել, դո՛նէ վերանոր հոգևորականներին միայն վերապահուած հսկողութիւնը ժողովրդական զպրօցներին վերայ:

Chr. d. Chr. Welt.

ԲՐԱՆԿԵՆԲՈՒՐԳԻ ՄԻՍԻՈՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Ապրիլի 8—9 դումարուել է Բերլինի նահանգի միսիոնարական խորհուրդի 25-րդ գլխաւոր համաժողովը: Առաջին նիստին ժամը 3-ին պատար Միսները մի հետաքրքրական դասախօսութիւն է կարդացել՝ «ինչպէս պէտք է երեխաներին հետաքրքրել հեթանոտական աշխարհով»: Նա համոզեցուցիչ փաստերով ցոյց տուաւ, թէ ինչպէս ընտանիքը, զպրօքը, եկեղեցին և առհասարակ ընդհանուր դաստիարակչական միջոցները մի և նոյն ժամանակ միջոց են և երեխաներին առաքելութեան (միսիոնի) և հեթանոտ աշխարհը քրիստոնէացնելու գործով հետաքրքրելու և զրաւելու համար: Մտքերի կենդանի փոխանակութեան ժամանակ այն միտքն արծարծուեցաւ, թէ ուսուցիչներին դեռ ևս վարժապետանոցներին մէջ պէտք է ծանօթացնել առաքելութեան գործի հետ:

Գոսներին միսիոնի բարեկամների ժողովի մէջ, որ բաց արաւ պատար Գարայս, խօսեց առաքելութեան տեսուչ Կաուշ «Հնդիկ կանայք և Հնդիկ երեխաներ» վերնագրով: Նա խօսում էր իւր փորձառութիւններին հիման վերայ, որ ձեռք էր բերել իւր տեսչական այցելութիւնների ճանապարհորդութեան ժամանակ: Նա նկարագրեց Հնդիկ կանանց և երեխաների տխուր վիճակը, Սենանայի առաքելութեան գործերը, առաքելութեան զպրօցները և ցոյց տուաւ, թէ անհրաժեշտ է բազմացնել կին գործիչներին թիւը այս առաքելութեան գործում:

Ապա առաքելութեան ինսպեկտոր Վիլդէն մի գեղեցիկ դասախօսութիւն կարդաց «Միսիոնը և փողը» վերնագրով: Ահա նորա մտքերից մի քանիսը: Միսիոնի վերայ եղած յարձակումները վնասում են այն նպատակի համար եղած նուիրաբերութեան գործին: Յանկալի է, որ այս յարձակումների դէմ ոչ թէ աստուածաբաններ, այլ միսիոնի բարեկամ աշխարհիկ մարդիկ պաշտպան հանդիսանան: Միսիոնի գործի համար եղած եկամուտները զոհացուցիչ չեն: Առաքելութիւնը պարտաւոր է